„ՄՇԱԿԻ“ ԱԻԵԼՈՒԱԾ № 12, 1874 Թ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒՈՅ ՆԱԻԹԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆՈՂ Պ. Ի. ԳՈՒԽՕՆԻՑ ԵԻ Վ. Ե. ԿՕԿՕՐԵՎԻՑ։

Այս 1874 Յունվարի 18-ին Նարձրագոյն հաստատուած է մեր ներկայացրած Բագուայ Նաւթի ակցիօներ Ընկերութեան կանոնադրութիւնը։

Այս կանոնադրութիւնը տալիս է Ընկերութեան.

1) Իրաւունք հանել նաւթ և նաւթագիլ շինել նրանցից լուսաւորելու և ուրիշ առարկաներ և նրանցով առուտուր անել (§ 1 կան։)

2) Իրաւունք առնել Ընկերութեան սեփականութիւն ինչպէս Բագուայ գաւարի մէջ, այնպէս էլ Ընդրկովկասի և Ռուսաստանի զանազան տեղերում նաւթի հանքեր և հողեր և, ինչտեղ հարկաւոր կը լինի, շինել գործարաններ նաւթի բովադրծութեան համար, նմանապէս գնել անհատական տեղեր տակարի փայտ կտրելու համար և շինել գործարաններ նաւթը մէկ տեղից միւս տեղ տանելու ամանների (§ 6 կան)։

3) Իրաւունք բաց անելու խանութներ և պահեստներ Ռուսաստանում և արտասահմանում նաւթի և նրանից շինած արդիւնքներ ծախելու համար (§ 7 կան.)։

Կանոնադրութեան զօրութեամբ հիմնողներին պատկանում՝ Սուրախանի Վերօսինի գործարանը, որը շինած է բագուայ կրակների վրա, որոնք տալիս են ձրի վառելիք. հողերը նաւթի կիսուածներով և նաւթի ծակված հորերով Խալախանի գաշտի վերայ, Բագուայ մօտ. նմանապէս նաւերը, ամբարները և պահեստները կալուածատէրերի և Ընկերութեան ընդհանուր համաձայնութիւնից (§ 2 կան.) և ընդհանուր բաժանողական Ժողովքի վերոյշեալ կալուածների վերջնի գինը որոշելուց յետոյ, գառնում են Ընկերութեան սեփականութիւն (§ 4 կան.)։

Վերոյիշեալ ձեռնարկութեան իրագործելու համար Ընկերութեան մայր գումարը նշանակուած է 7,500,000 րուբլ, որ բաժանուած է 30,000 ակցիաների, ամէն մէկը 250 րուբլ արժողութեամբ (§ 11 կան)։ Հիմնողները ակցիաների ամբողջ քանակութիւնից պահում են իրանց համար երրորդ մասը, տալով նրանց փողը բաժանորդների հետ հաւասար (§ 12 կան.), իսկ մնացած 20,000 ակցիաների համար բացում է սորագրութիւն, իրաւունք ունենալով (§ 15 կան) եթէ բոլոր ակցիաները չը բաժանուին սորագրութիւնով, պահել իրանց համար և մնացորդ չը բաժանուած ակցիաները։

Կանոնադրութիւնով նշանակուած գումարի քանակութիւնը տալիս է ընկերութեանը կարողութիւն, բացի այս գումարը, որ կը արդի հիմնողներին նրանցից առած կալուածներն համար, ունենալ նշանաւոր դրամական միջոցներ, բոլորովին համեմատ Ռուսաստանի մէջ նաւթի արդիւնագործութեան առաջիկայ զարգացմանը։

Կանոնադրութեան § 12 համեմատ Ընկերութեան հիմնողները պատիւ ունին յայտնել ընդհանրութեան նրանցից առաջարկուած Բագուայ նաւթի ընկերութեան 20,000 ակցիաների սորագրութեան մասին, ամէն մէկը 250 րուբլ արժէքով, հետևեալ պայմաններով։

ՍՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ։

1) Ակցիաների սորագրութեան ժամանակ մտցնում է գրաւ 10% այսինքն ամէն մէկ ակցիայի համար 25 րուբլ նաղդ փողով կամ տոկոսաթղթերով և ակցիաներով կուրսին համեմատ, տաս տոկոսիք ցած նոցա բուրսայի գնից։ Այս գրաւների ստանալու համար սորագրվողներին տրվում են ստացականներ։

2) Եթէ բաժանուած ակցիաների թիւը աւելի կը լինի սորագրութեան համար առաջարկուածների քանակութիւնից, այն ժամանակ սորագրողների մէջ դասաւորութիւն կը լինի, որի մասին կը հրատարակուի, երբ, բոլոր տեղերից, որտեղ սորագրութիւն է բացուած, տեղեկութիւն կըստացուի։

3) Սորագրութեան և դասաւորութեան հետևանքների հրատարակելուց յետոյ, այն հիմնարկութիւնները, որոնք բացել էին իրանց մօտ սորագրութիւն, ստացականները ներկայացնելուց յետոյ, կըտան ժամանակաւոր վկայականներ ակցիաների համար, մինչդոյն ժամանակը գրաւ ներկայացրած տոկոսաթղթերը յետ են դարձնվում, իսկ սորագրողների համար նշանակուած ակցիաների համար պակքե վճարուի 125 րուբլ, ամէն մէկ ակցիայի համար, այսինքն 50%, իսկ պ. պ. սորագրվողներից նրանք, որոնք սկզբից մտցրել են 25 րուբլ ամէն ակցիայի համար նաղդ փող, վճարում են հետագոյդ 100 ր., ամէն ակցիայի համար։

4) Սորագրութիւնը պէտք է լինի երկքշաբթի 9-ին, և չորեքշաբթի 10-ին Ապրիլի։

Ս.-Պետերբուրգում։

Փոխադարձ Արեդիտի ընկերութեան մէջ։

Վոլժսկօ-Կամսկի Առևտրական Բանկի Վարչութեան մէջ։

Մոսկվայում։

Մոսկվայի վաճառականական բանկում

Առևտրական փոխատու բանկում

և Վոլժսկօ-Կամսկի Առևտրական բանկի բաժնում։

Սոպրանո Վէռոյ, Նէյոտեբինբուրգ, Պոլան, Պենձ, Տնեղ-Նովգորոդ, Պերմ, Րժեվ, Ոչբէնսկ, Սամարա, Սարատով, Սիմբիրսկ, Սեղրան, Ռ-ֆա, Խարիով, Յարոսլաւլ, Զիտոմիր և Նիժնօլավ Վոլժսկօ-Կամսկի Առևտրական բանկի տեղային բաժինների մէջ։

Ռոգո- Ընդրկասից ընկերութեան կանոնադրայում։

Ռեբրբեանոկ
Մարիուպոլ
Րոստով Դոնի
վերոյ և Տագանրօգ

Եգորվսկօ-Դոնսկի Առևտրական Բանկում

Ռիբինսկ Նիժնի Նովգ. և Օրել

Օրելի Առևտրական Բանկում

Վ. Նիժնի Վ. Լինայի Փոխադարձ Արեդիտի ընկերութեան մէջ

Վ. Խերսոնի Դինեբուրգ և Ռիգա

Ռիգայի Առևտրական Բանկում

Վ. Օրօնեժի Վ. Օրօնեժի Առևտրական Բանկում

Կոստրոմայի Կոստրոմայի Առևտրական Բանկում

Կրեմինչուգ և Պոլտաւայ

Կրեմինչուգի Առևտրական Բանկում

Մօշայսկ
Ռուզա
Տուլայ

Բեռզանի Վ. առևտրականական Բանկում

Նօվօչերկասկի Փոխադարձ Արեդիտի ընկերութեան մէջ

Օրեխօւ Մօսկվայի Վ. առևտրականական Բանկի Բաժնում

Օրենբուրգ Մօսկվայի Վ. առևտրականական Բանկի բաժնում

Պենզա Պենզայի քաղաքային Խառարական Բանկում։

Թիֆլիս Թիֆլիսի Առևտրական Բանկում։

Վերջապես, ընկերութեան հիմնողները պարտք են համարում յայտնել, որ ամէն տեղ, ուր նշանակուած է ակցիաների սորագրութիւնը, կարելի է ստանալ Բագուայ նաւթի ընկերութեան կանոնադրութիւնը, իւր բացատրեալ յաւելուածով և այս ընկերութեան առաջիկայ գործունէութեան պրօգրամայով։ Այս պրօգրամայի գլխաւոր հիմքերը, որոնք կը ներկայացնուին պ. պ. Ակցիօներների Ընդհանուր ժողովի քննութեանը և հաստատմանը, հետևեալներն են՝

1) Կերոսին (տեղային Կովկասեան «Փոտոնաւթիլ») շինելու համար՝ կը բաւականանայ միմիայն մէկ գործարանով, որ շինած է Բագուայ մօտ Սուրախանի կրակների վերայ, մեծացնելով նորան մինչև այն աստիճան, որ բոլոր հողից դուրս եկած գաղերը գործ դրուին նաւթ շինելու վերայ, որովհետև այդ գաղերը ձրի վառելիք լինելով, միջոց են տալի կերոսին շինելու աւելի էժան քան թէ բոլոր կերոսինի գործարաններում։

և 2) Հում նաւթ ծախելու վերաբերութեամբ, որ Սուրախանի գործարանը բաւականացնելուց յետոյ, կմնայ Ընկերութեան աղբիւրների մէջ, նմանապէս միւս նաւթատէրերից գնածը, Ընկերութիւնը կը բաւականանայ Վոլգայի վերայ նաւթի օպտով ծախելով, այն քաղաքներում, որոնց մօտ կան երկաթուղիներ, տալով նաւթը շոգենաւների Ընկերութիւններին հասցնելու, առանց գումար մխելու սեփական նաւեր շինելու համար։

Վոլգայի վերայ պէտք է պահանջ լինի հում նաւթի՝ ա) գիւղերում լուսաւորելու համար, որովհետև այս լուսաւորութիւնը աւելի անվտանգ անելով հրդեհներից, քան թէ լուցիկը, 8 ժամ լուսաւորելու համար արժէ 1 կոպ., միևնոյն ժամանակ նաւթի լոյսը հաւասարէ 2¼ 5 կոպ. արժողութեան ճրագուէ մոմի լոյսին, և բ) գործարանների արդիւնաբերութեան կերոսին շինելու համար, գործածելով այդ արդիւնաբերութիւնից մնացորդ նաւթը քսելու իւղ շինելու համար, անիւներ քսելու, լուսաւորող գազ և փոխանակ ձիւթի, որի գինն է Վոլգայի գլխաւոր Ռուբա-Յարիցինում 1 րուբլ փութը։

Վերոյիշեալ պրօգրամայով ձեռնարկութեան հաշուած ապագայ օգուտները, բոլորովին չափաւոր հաշուով, որը ասուած է կանոնադրութեան յաւելուածում, կարող են լինել՝ առաջին տարին ամբողջ բաժանորդական մայր-գումարի վերայ ոչ պակաս քան 11%, իսկ երկորդ տարին 19%։ Հետևեալ տարիների համար աչքի առաջ կայ Ընկերութեան օգուտների նշանաւոր աճելը, նա մանաւանդ հատանական որ առաջին և երկրորդ տարիների օգտի հաշուումը չեն մտցրած երկու առարկաներ՝ քսելու իւղ և նաւթագիլ։

Ընկերութեան կանոնադրութիւն բացատրող յաւելուածը պարունակում է իւր մէջ մանրեր նաւթի առաջիկայ ընդհանուր ապագային նշանակութեան մասին և կազմուած է այն նպատակով, որ այն անձինքները, որոնք ցանկացել են բաժանորդ լինել, կարողանային առաջուց քննել գործի դրութիւնը և մտցնել իրանց նկատողութիւնները ակցիօներների առաջին ժողովը, որի վճռին կը ենթարկուի Բագուայ նաւթի Ընկերութեան ապագայ գործունէութիւնը։

Բաժանորդների առաջին ընդհանուր ժողովը, որ մինչև Վարչութեան կազմելը կը հրաւիրուի Ընկերութեան հիմնողներից, պէտք է լինի Ս.-Պետերբուրգում։ Ժողովի ժամանակը և տեղը առանձին կը յայտնուի ամէն լրագիրներով, ներկայացնելով այդ ժողովի պարտմանց առարկան և նշանակելով Ընդհանուր ժողովի օրը լրագրերում յայտնելուց մէկ ամիս յետոյ (§ 55 կան.)։

Պ. Գուբօնին
Վ. Կոկօրեվ։

ՎՕԼԺՍԿՕ-ԿԱՄՍԿԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ։

Հիմնուելով վերոյիշեալ Բագուայ Նաւթի Ընկերութեան հիմնողների յայտարարութեան վերայ, Վոլժսկի-Առևտրական Բանկի վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ, հիմնողների յանձնարարութիւնով, Բանկը բաց է անում սորագրութիւն Բագուայ Նաւթի Ընկերութեան 20,000 ակցիաների համար Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում և իւր բոլոր բաժինների մէջ (Հիմնողների յայտարարութեան մէջ յիշած քաղաքներում), հետևեալ կերպով։

1) Սորագրուիլ կարելի է Ս.-Պետերբուրգում, Բանկի Վարչութեան բնակարանում (Էնգելհովի տունը, № 18) 27, Նեվսկի պրօսպեկտի և Նիժատերինսկի կանալի անկիւնում), նմանապէս և ուրիշ քաղաքներում Բանկի տեղային մասներում, երեքշաբթի և չորեքշաբթի այս տարուայ ապրիլի 9-ին և 10-ին, 10 ժամից մինչև 3-ը օրուայ։

2) Սորագրութեան ժամանակ պէտք է վճարուի 10% ակցիայի հիմնական գնիցը, այսինքն 25 րուբլ նաղդ փողով կամ տոկոսաթղթերով, առանձին այս մասին կազմած տեղեկագրով, և փողը կամ գրաւի ստանալու համար պ. պ. սորագրվողները կ'ստանան Բանկից ստացականներ։

3) Սորագրութեան և դասաւորութեան հետևանքը յայտնելուց յետոյ, նշանակվում է մտցնել 40% այսինքն 100 րուբլ իւրաքանչիւր ակցիայի վրա, որի վճարելուց և առաջուայ ստացականը ներկայացնելուց յետոյ Բանկը կը սկսի տալ ժամանակաւոր վկայականներ, իսկ պ. պ. սորագրողները, որոնք առաջին մտցնելու 25 րուբլի համար տոկոսաթղթեր են ներկայացրել իրրև գրաւ, պէտք է նրանց փոխան նաղդ փողի վրա։

Ամէն ակցիայի համար 40% մտցնելու վերջին պայմանաժամի մասին հիմնողները կը յայտնեն դասաւորութեան յայտարարութեան հետ միասին։

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ։

Բանկի Վարչութիւնը, համաձայնուելով Վոլժսկօ-կամսկի Բանկի հետ յանձն առնելու Բագուայ Նաւթի Ընկերութեան ակցիաների սորագրութիւնը, պատիւ ունի յայտնելու, որ վերոյիշեալ յայտարարութիւնների և նրանց մէջ նշանակուած պայմաններին համաձայն, ակցիաների սորագրութիւնը կը բացուի Բանկում եկող ապրիլի 9-ին և 10-ին սկսուած առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը։

Սորագրութեան ժամանակ պէտք է մտցնի 10% ամէն 250 ր. արժող ակցիայի հիմնական գնից, 25 ր., նաղդ փողով կամ տոկոսաթղթերով, իսկ այդ փողը կամ գրաւական ընդունելու համար պ. պ. սորագրողները կ'ստանան Բանկից ստացականներ։